

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гохар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS). 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY). 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

ԳԼՈՐԳ ԿԵՏՈՅԱՆ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

***Հիմնաբառեր.** սահմանային լարվածություն, պատերազմի նախապատրաստություն, «ակտիվ չեզոքություն», Կորբերի կենտրոնացում, պաշտպանական միջոցառումներ, պակտության մտայնություններ, բանակցություններ:*

1941 թ. հունիսի 22-ին Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակումով սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի կարևորագույն առճակատումը՝ Գերմանա-խորհրդային պատերազմը: Այն ընդգրկում էր մարդկային ու նյութական հսկայական ռեսուրսներ, ենթադրում քաղաքական և ռազմական ճկուն ռազմավարությունների մշակում ու գործադրում և իր արդյունքներով վճռորոշ էր բազմաթիվ պետությունների ու ազգերի հետագա ճակատագրի համար: Հայ ժողովուրդը վճռական էր տրամադրված սեփական ներուժը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պաշտպանությանը և ընդհանուր հաղթանակին ծառայեցնելու գործում: Չնայած Խորհրդային Հայաստանի տարածքը չդարձավ ռազմական գործողությունների թատերաբեմ, սակայն Հայրենական պատերազմի ողջ ընթացքում այդ վտանգը առկա էր:

Սույն հոդվածով նպատակ ունենք քննարկելու մեծ կարևորություն ու արդիականություն ունեցող ինդիք՝ Հայրենական պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստան-Թուրքիա սահմանին աճող լարվածությանը: Թեման, բացի գիտապատմական նշանակությունից, կարևորվում է նաև հայ ժողովրդի համար Հայրենական պատերազմի ունեցած դերի արժևորմամբ և ներկայումս տեղի ունեցող իրադարձություններով: Մեր օրերում նույնպես Թուրքիան՝ իր արտաքին ծավալապաշտական քաղաքականությամբ և ռազմական զորաշարժով ու զորավարություններով, մեծացնում է սահմանային լարվածությունը: Ուստի նախկին փորձի ուսումնասիրությունը ու դասերը կարող են արժեքավոր օրինակներ լինել ներկայիս քաղաքականության համար:

Հայրենական պատերազմի մասին տարբեր լեզուներով գրվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք տարբեր հիմնակետերից քննարկում են տարաբնույթ ինդիքներ: Սակայն դեռևս չկա ամբողջական աշխատանք, որը նվիրված լինի Խորհրդային Հայաստան-Թուրքիա սահմանային լարվածության ուսումնասիրմանը: Հրապարակի վրա առկա աշխատանքներում ներկայացվել են հիմնականում Թուրքիայի չեզոքության ու պատերազմի մեջ մտնելու հավանականության վերաբերյալ պետական, քաղաքական ու հասարակական գործիչների և կառույցների հայտարարությունները, այս կամ այն բանակցությունում եղած քննարկումները: Բուն սահմանին և սահմանամերձ շրջաններում գործնականում տեղի ունեցող զորաշարժերը և ռազմական նշանակության այլ փոփոխությունները ուսումնասիրության նյութ չեն դարձել: Օգտագործելով և շրջանառության մեջ դնելով արխիվային նորահայտ վավերագրեր՝ այս հոդվածով փորձել ենք որոշակիորեն լրացնել այդ բացը:

Խորհրդա-գերմանական առճակատման ընթացքում Խորհրդային Միության անհաջողությունները ուղիղ համեմատական էին Թուրքիայի նվաճողական ցանկությունների ընդլայնման և բացահայտ դրսևորման հետ: Չնայած 1941 թ. հունիսի 25-ին թուրքական կառավարությունը Մոսկվայում իր դեսպան Հայդար Աբթալի միջոցով ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությանը հայտնում է իր չեզոքության մասին¹, իրականում որդեգրում է

* Հոդվածը ներկայացվել է 01.18.2020 թ., գրախոսվել՝ 28.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

«ակտիվ չեզոքության» քաղաքականությունը՝ սպասելով հարմար պահի խորհրդային Միության դեմ պատերազմ սկսելու համար: Չնայած 1925 թ. կնքված խորհրդա-թուրքական «բարեկամության և չեզոքության մասին» պայմանագրին, 1941 թ. օգոստոսի 10-ի՝ խորհրդային Միության՝ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին հայտարարությանը, Թուրքիան ղեկավարող բարձրաստիճան պաշտոնյաները պատերազմի առաջին տարիներին չէին թաքցնում իրենց ցանկությունը խորհրդային Միության պարտության և ոչնչացման հարցում: Թուրքիան, նախ խախտելով չեզոքության կարգավիճակը, արդեն 1941 թ. հուլիս ամսից թույլ է տալիս գերմանական և իտալական նավերին մտնել Էգեյան ծովի նեղուցները¹, այն դեպքում, որ դաշնակից երկրների նավերին արգելվում էր: Բացի այդ Թուրքիան Գերմանիային էր մատակարարում խրոմ, բամբակ, մետաղներ և ստրատեգիական նշանակության այլ նյութեր²: Մյուս կողմից, ավելի հաճախակի էին դարձել Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակների կողմից արվող հակա-խորհրդային ագրեսիվ հայտարարությունները: Թուրքիայում ակտիվացել էր նաև պան-թուրքական գաղափարների քարոզչությունը, որը վայելում էր պետական քարոզչությունը: Անկարայում գերմանական դեսպան Ֆրանց ֆոն Պապենի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Շյուբրյու Սարաջօղլուն առաջարկում է ««ռուսական հարցը» լուծել հիսուն միլիոն ռուս ջարդելու, իսկ մնացածներին ստրկացնելու միջոցով»³: Իրենց հերթին Մոսկվայում Թուրքիայի դեսպան Յ. Աբթայը և Մոսկվայում Թուրքիայի ռազմական կցորդը խորհուրդ էին տալիս իրենց կառավարությանը, առաջ անցնելով Գերմանիայից, առաջ շարժել թուրքական զորքերը և տիրանան Կովկասին⁴:

Իր հերթին Գերմանիան ցանկանում էր Թուրքիային, որպես իր դաշնակցի, օր առաջ ներթաշել պատերազմի մեջ: Բազմաթիվ բանակցային գործընթացներից զատ ձեռնարկվում էին նաև սադրիչ քայլեր: 1941-1942 թթ. ընթացքում գերմանական գործակալների միջոցով լուրեր էին տարածվում, որ ԽՍՀՄ-ը հայտարարել է Բոսֆոր և Դարդանել նեղուցների կապակցությամբ իր պահանջների ու Բուլղարիան օկուպացնելու մտադրության մասին, որ խորհրդային Միությունը և Մեծ Բրիտանիան կնքել են գաղտնի պայմանագիր Բոսֆորի և Դարդանելի վրա վերահսկողություն սահմանելու ռուսական պահանջի ընդունման մասին, որ ռուսական կողմը հսկայական զորք է կենտրոնացրել Բաթումում և թուրքական տարածքների ներթափանցման հետևանքով առկա են զոհեր ու մոտ 300 վիրավորներ, որ խորհրդային Միության կողմից ոչնչացվել է թուրքական «Չանթայա» շոգենավը և այլն⁵: խորհրդային Միությունը պարբերաբար պաշտոնական տեղեկություններ էր տարածում այդ լուրերի կեղծ լինելու մասին: 1942 թ. Գերմանիայի կողմից մահափորձ է կազմակերպվում Անկարայում իր դեսպան ֆոն Պապենի նկատմամբ, որի մեղքը բարդվում է ԽՍՀՄ քաղաքացիների վրա: Սակայն Թուրքիան, հավատարիմ մնալով իր ճկուն դիվանագիտական քաղաքականությանը, առաջնորդվում էր միայն առճակատման ընթացքում ձևավորված ուժերի հարաբերությամբ և Գերմանիայի հետ դաշնակցած պատերազմի մեջ կմտնելու միայն խորհրդային Միության բացահայտ պարտության դեպքում:

Թուրքիայի աստելությունը ավելի բացահայտ էր դրսևորվում խորհրդային Հայաստանի նկատմամբ, որը գտնվում էր Թուրքիայի հնարավոր հարձակման վտանգի առաջնագծում: Մասնավորապես, 1942 թ. թուրքական «Сон Телеграф» (Երազի հեռագիր) թերթում

¹ *Տե՛ս Внешняя политика Советского Союза в период отечественной войны, документы и материалы (այսուհետև՝ Внешняя политика...), т. I, М., 1944, с. 114.*

² *Տե՛ս Մելքոնյան Բ., ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.), Ե., 2013, էջ 33:*

³ *Տե՛ս СССР и Турция 1917-1979, М., 1981, с. 171.*

⁴ *Միմոնյան Յ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 503:*

⁵ *Տե՛ս Корхмазян Р., К вопросу позиции Турции во Второй мировой войне (июнь – декабрь 1941 г.), «Լրարեր հասարակական գիտությունների», № 8, 1973, էջ 43:*

⁶ *Տե՛ս Внешняя политика..., т. I, էջ 385, 387:*

տպագրված հոդվածով հայտարարվում է, որ վերջին մարտերն ընթանալու են Հայաստանի տարածքում և այդ երկիրը պետք է կործանվի¹:

Հարկ է նշել նաև, որ 1941 թ. Կոստանդնուպոլսի ոչ թուրքական ծագման բոլոր տղամարդիկ բանակ զորակոչվելու անվան տակ ուղարկվում են համակենտրոնացման ճամբար²: Սա ցույց է տալիս, որ Թուրքիան շարունակում էր ցեղասպան քաղաքականությունը 1915 թ. Մեծ եղեռնի նմանությամբ: Միաժամանակ Կ.Պոլսի ոստիկանության տնօրեն Ալուկ Նինատ Պենեյը ուղարկվում է խորհրդային Միության՝ Գերմանիայի կողմից բռնազավթված տարածքներ (Կիև և Կրակով)՝ ռազմագերիների ճամբարներն ու գրաված տարածքների կառավարումն ուսումնասիրելու համար: Ինչպես եզրակացվում է Ստանբուլի ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսարանի տեղեկագրում՝ այդ արվում էր «հստակ սահմանված նպատակով»³:

Խորհրդային Միությունը լավ էր գիտակցում Թուրքիայի կողմից սպառնացող վտանգը: Դեռևս 1941 թ. հունվարին խորհրդային բանակի գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պատրաստած՝ «Գերմանիայի հնարավոր դաշնակից պետությունների ցանկում» նշվում էր Թուրքիայի մասին⁴: 1941 թ. հուլիսի 4-ին Մոսկվայում կայացած Անդրկովկասին երեք հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների առաջին քարտուղարների և Ստալինի հանդիպման ժամանակ վերջինը հայտարարում է. «Թեև ռազմաճակատը ձեզանից հեռու է, սակայն դուք վտանգավոր գոտում եք: Մենք չենք կարող վստահ լինել Թուրքիայի չեզոքության վրա»⁵:

Սպառնացող վտանգին համապատասխան ձեռնարկվում էին քայլեր Անդրկովկասի երկրների պաշտպանական ներուժը բարձրացնելու համար: Անդրկովկասի զինվորական շրջանի ռազմական խորհուրդը 1941 թ. հունիսի 25-ին որոշում է ստեղծել կործանիչ գումարտակներ՝ թշնամու օդային դեսանտների արագ լիկվիդացիայի համար⁶: Այս որոշմանն համապատասխան 1941 թ. հուլիսի 3-ին ՀՍԽՍՀ Ժողովխորհը որոշում է ընդունում Հայաստանում կործանիչ գումարտակների ստեղծման ընթացակարգի մասին⁷: Կործանիչ գումարտակների ձևավորման աշխատանքները իրականացվելու էին Ներքին գործերի ժողովատի ղեկավարմամբ: Նրանց գործնական ղեկավարման համար ստեղծվում է օպերատիվ շտաբ, որի ղեկավար է նշանակվում Լևոն Գալուստի Կարապետյանը, իսկ նրա առաջին տեղակալ՝ Գեդեոն Հայրապետի Միքայելյանը: Որոշումով նախատեսվում էր 10 օրվա ընթացքում կազմակերպել շուրջօրյա վերահսկման պահակակետեր, որոնց անձնակազմը պետք է լրացվեր տեղանքին լավ ծանոթ տեղացի բնակիչներից⁸: 1943 թ. հունվարի 1-ի դրությամբ կործանիչ գումարտակների ընդհանուր թվակազմը հասնում էր 9507 մարդու (700-ը պարաշյուտիստներ էին), որից 4800 հոգին (1 գունդ)՝ Երևանում, 500-ը՝ Լենինականում, 200-ը՝ Կիրովականում⁹: Պարբերական բնույթ էր կրում կործանիչ գումարտակների մարտիկների ուսուցումը, որի ընթացքում նրանք ուսումնասիրում էին հրացանի, նռնակի նյութական մասը, անցնում էին շարային, սվինամարտի պարապմունքներ, կատարում տակտիկական վարժություններ՝ վարժվելով թշնամու պարաշյուտային դեսանտների, դիվերսանտների և լրտեսների դեմ պայքարի ձևերի ու մեթոդների մեջ¹⁰: Կործանիչ գումարտակները ապահովված էին պաշտպանական և Անդրկովկասի ռազմական շրջանի ռազմական խորհրդի կողմից Հայաստան ուղարկված Իրանից վերցված զենքերով և հրանյութերով: Միայն 1942

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 72, թ. 13:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում

⁴ Տե՛ս Մելքոնյան Բ., նշվ. աշխ., էջ 27:

⁵ *Кавказ выстоял, Кавказ победил, Ветераны вспоминают, Тбилиси, 1973, с. 130.*

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 104, թթ. 4-5

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 1 և շրջ.:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 688, ց. 32, գ. 23, թ. 15-17:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 6:

թ. Հայաստանի կործանիչ գումարտակներին հատկացվում է 8000 հրացան (7000 «մաուզեր» սիստեմի, իսկ 1000-ը ռուսական), 50 և 82 մմ տրամաչափի 18 ականանետ, 40 հաստոցավոր և ձեռքի գնդացիր և այլն¹: Օպերատիվ շտաբի տրամադրության տակ են դրվում պաշրջավիաքիմի կենտրոնական խորհրդի ավիացիայի 7 ինքնաթիռ, տրանսպորտային տարբեր միջոցներ²: Ընդհանուր առմամբ կործանիչ գումարտակները ունեին 8921 հրացան, 7 ինքնաթիռ, 2 տանկ, 52 գնդացիր, 18 ականանետ³: 1941 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմը որոշում է ընդունում հակառակորդի տանկերի կործանման ջոկատներ ստեղծելու մասին, որի համաձայն՝ բոլոր հիմնարկներում, ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և ուսումնական հաստատություններում պետք է կազմակերպվեն 6-12 հոգանոց խմբեր: Այդ խմբերում ընդգրկվելու էին այն լավագույն ՋԼԿԵՄ անդամները և երիտասարդները, որոնք ընդգրկված չէին կործանիչ գումարտակներում և այլ զինվորական ստորաբաժանումներում⁴:

1941 թ. հուլիսի 10-ից քայլեր են ձեռնարկվում Հայաստանում աշխարհազոր կազմակերպելու համար: ՀԿԿ կենտկոմի 1941թ. օգոստոսի 12-ի որոշմամբ ստեղծվում է աշխարհազորային ուժերի շտաբ, որի պետ է նշանակվում պահեստի կապիտան Ա. Կյուրեղյանը, որին հետագայում փոխարինում է պաշրջավիաքիմի կենտրոնական խորհրդի նախագահ Վ. Գրիգորյանը⁵: Աշխարհազորի մեջ են ընդգրկվում զենք կրելու ընդունակ քաղաքացիները, որոնք ընդգրկված չէին կործանիչ գումարտակներում և տեղական հակաօդային պաշտպանության զորամասերում: Նրանց համար կազմակերպվում էր ռազմական ուսուցում, հայերեն են թարգմանվում Կարմիր բանակի կանոնադրքերը: 1942 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ աշխարհազորում հաշվվում էր 15327 մարդ՝ 3 դիվիզիա: Կազմակերպական ձևն հետևյալն էր. ջոկատ, որն ընդգրկում էր մինչև 500 հոգի, բաղկանում էր 5-6 խմբից (յուրաքանչյուրը՝ 60-70 մարդ), իսկ խումբը բաղկանում էր 5-6 դրոժինայից (յուրաքանչյուրը՝ 10-12 մարդ): Ինչպես իր հուշերում պարզաբանում է Լևոն Կարապետյանը, աշխարհազորի՝ բանակի ձևին չհամապատասխանող նման ստորաբաժանումը նախատեսված էր պարտիզանական պատերազմի համար՝ հակառակորդի Անդրկովկաս ներթափանցելու դեպքում⁶:

Ինչ վերաբերում է ընթացող պատերազմական գործողություններին, ապա սկսման պահից Թուրքիան ուշադիր հետևում էր դրանց զարգացման ընթացքին: 1941 թ. աշնանը Թուրքիան պաշտոնաթող զեներալ Էմիր Էրքիլեթի և ռազմական ակադեմիայի պետ զեներալ Ալի Ֆուադ Էրդենի գլխավորությամբ երկու պատվիրակություն է ուղարկում գերմանա-խորհրդային ռազմաճակատ՝ իրավիճակին ծանոթանալու և գերմանական բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկումներ կազմակերպելու համար: Միաժամանակ Թուրքիայի արևելյան վիլայեթներ են ուղարկվում մի խումբ գիտնականներ՝ բանահյուսական նյութեր հավաքելու պատրվակով, բայց իրականում զբաղվելու խորհրդային Միության վրա Թուրքիայի ապագա հնարավոր հարձակման նախապատրաստման աշխատանքներով⁷: Թուրքիայի հարձակման սպառնալիքի հետևանքով լարվածությունը զագաթնակետին հասավ 1942 թ. կեսերին, երբ գերմանական զորքերը հարձակում կազմակերպեցին Կուլգայի և Հյուսիսային Կովկասի ուղղությամբ: Այս ժամանակ է, որ Թուրքիան Հայաստանի սահմա-

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 1, գ. 123, թ. 8:

² Տե՛ս Շատիրյան Յ., Հայաստանի կոմկուսի միջոցառումները կործանիչ գումարտակների ստեղծման և նրանց գործունեության ղեկավարման ուղղությամբ (1941-1945 թթ.) (այսուհետև՝ Հայաստանի կոմկուսի միջոցառումները...), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 6, Ե., 1974, էջ 55:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 688, ց. 32, գ. 23, թ. 17:

⁴ Տե՛ս Советская Армения в годы Великой отечественной войны (1941-1945) (այսուհետև՝ Советская Армения в годы...), сборник документов и материалов, Е., 1975, с. 97-98.

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 688, ց. 32, գ. 32, թ. 11:

⁶ Տե՛ս նույն տեղում, թթ. 11-12:

⁷ Տե՛ս Միմոնյան Յ., նշվ. աշխ., էջ 489, 490, 499:

Նի մոտ կենտրոնացնում է 26 դիվիզիա՝ մոտ 1 միլիոնանոց բանակ: 1942 թ. հունիսին թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ մարշալ Ֆեզվի Չաքմաքը հայտարարում է, որ «պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը համարյա անխուսափելի է»¹: Թուրքիայում հայտարարվել էր արտակարգ դրություն, իսկ Խորհրդային Միության սահմանակից շրջաններում՝ ռազմական դրություն: Թուրքիան, այնուամենայնիվ, զգուշանում էր շտապելուց և սպասում էր գլխավոր ռազմաճակատներում, գլխավորապես Ստալինգրադում ԽՍՀՄ-ի պարտությանը: Նախատեսվում էր, որ Թուրքիան պատերազմի մեջ պետք է մտնի 1942 թ. աշնան վերջերին: 1942 թ. աշնանը թուրքական մի պատվիրակություն էր մեկնել ռազմաճակատ՝ Ստալինգրադի ճակատամարտում ծավալվող իրադարձություններին հետևելու համար: Նույն ժամանակ գերմանական գեներալներ Ֆ. Գալդերը և Ա. Իոդլը հայտարարում էին, որ «Կովկասի ճակատագիրը վճռվում է Ստալինգրադի տակ»²:

Հաճախակի դարձան Հայաստանի և Թուրքիայի սահմանի խախտումները: 1942 թ. սեպտեմբերի 14-ին Լենինականից 45 կմ հեռավորության վրա երևում է գերմանական ինքնաթիռ, իսկ հոկտեմբերի 1-ին Երևանի օդային տարածքով անցնում է թուրքական ինքնաթիռը³: Սեպտեմբերի 18-ին Սիսիանում կործանիչ գումարտակների կողմից բռնվում են հակառակորդի 2 պարաշյուտիստ-դիվերսանտներ, որոնց մոտ հայտնաբերվում են զենք և պայթուցիկ նյութեր⁴: Նմանատիպ բազմաթիվ խմբեր են բռնվում Ախուրյանի, Ղուկասյանի, Հոկտեմբերյանի և այլ շրջանների կործանիչ գումարտակների ջանքերով:

Խորհրդային կողմը ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր Անդրկովկասի պաշտպանողական ներուժը բարձրացնելու համար: 1942 թ. մայիսի 15-ին երկրորդ անգամ Անդրկովկասյան ռազմական օկրուգը վերաճվում է ռազմաճակատի, որի հրամանատար է նշանակվում Ի. Տյուլենևը: Անդրկովկասում են կենտրոնացվում 45-րդ և 46-րդ բանակները: Հայաստանի սահմանների պաշտպանությամբ էին զբաղված 39-րդ Լենինականի և 40-րդ Երևանյան սահմանային ջոկատները: 1942 թ. սեպտեմբերի 16-ին 45-րդ բանակի ռազմական խորհուրդը, հիմք ընդունելով սեպտեմբերի 9-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշումը, Հայաստանի և Նախիջևանի տարածքներում ռազմական դրություն հայտարարելու մասին որոշում է ընդունում՝ իր վրա վերցնելով նաև պաշտպանական շրջանի պետական իշխանության մարմինների լիազորությունները, հասարակական կարգի և պետական անվտանգության ապահովման պարտականությունը⁵: 1942 թ. սեպտեմբերի 22-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմը քննարկում է «Թշնամու կողմից Հայկական ԽՍՀ ուղարկվող դիվերսանտների ու հետախույզների պարաշյուտային խմբերի դեմ պայքարի ուժեղացման մասին» ԽՍՀՄ ՆԳԺԿ դիրեկտիվը և հաստատում կոնկրետ միջոցառումների ծրագիր⁶: Հոկտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանային կոմիտեն, քննարկելով Թուրքիայի հնարավոր հարձակման հարցը, ընդունում է հանձնարարականներ մեկ օրվա ընթացքում հակաօդային պաշտպանության քաղաքացիական միջոցները՝ մբաստարաններն ու դաշտային տիպի ապաստարանները կարգի բերելու մասին⁷: Այս հանգամանքը խոսուն վկայություն է թուրքական հարձակման հնարավորության աստիճանի մասին: Պաշտպանական նկատառումների շրջանակում է նաև 45-րդ բանակի ռազմական խորհրդի 1942 թ. հոկտեմբերի հրամանով 26 1-րդ հայկական դիվիզիայի կազմավորումը, որի գլխավոր խնդիրն էր լինելու սահմանի պաշտպանությունը: Խորհրդային Հայաստան - Թուրքիա սահմանի երկայնքով կատարվում են պաշտպա-

¹ Նույն տեղում, էջ 501:

² Գալդեր Փ., *Военный дневник, т. 3, кн. 2, М., 1971, с. 310.*

³ Տե՛ս Շատվորյան Հ., *Հայաստանի կոմկուսի միջոցառումները...*, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 6, 1971, էջ 56:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 30, գ. 48, թ. 211:

⁵ Տե՛ս *Советская Армения в годы...*, էջ 183:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 46, ց. 5, գ. 192, թ. 128:

⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 14, ց. 2, գ. 107, թ. 77:

նական ամրությունների կառուցման աշխատանքներ: Շուրջ 20 կմ երկարությամբ կառուցվում են ԴՈՏ-եր և ԴՉՈՏ-եր¹, մոտ 50 կմ երկարությամբ՝ հակատանկային ամրություններ, անցկացվում են փշալարերից արգելակներ և այլն²:

Թուրքիայի հարձակողական ագրեսիան նվազում է Ստալինգրադում Խորհրդային ուժերի սկսած հակահարձակման և տարած հաղթանակի հետևանքով: Շնորհիվ այդ հաղթանակի Հայաստանի տարածքը զերծ է մնում պատերազմական թատերաբեմ դառնալուց: Չնայած վերը հիշված հանգամանքին, Թուրքիայի կառավարող շրջանակների մոտ պահպանվում է Խորհրդային Միության դեմ պատերազմ սկսելու ցանկությունը, սակայն արտաքին քաղաքականությունը դառնում է Էլ ավելի զգուշավոր: Շարունակվում են Թուրքիայի և Գերմանիայի միջև առկա դիվանագիտական և տնտեսական համագործակցային հարաբերությունները:

1943 թ. հունվարի 30-31-ը Ադանայում կայացած Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինոնյուի և Անգլիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի հանդիպման ժամանակ թուրքական կողմը փորձում է համոզել Չերչիլին գնալու Գերմանիայի հետ հաշտեցման և առանձին հաշտության պայմանագիր կնքելուն: Իր հերթին Չերչիլը փորձում էր համոզել Թուրքիային մտնել պատերազմի մեջ դաշնակից երկրների կողմից³: Թուրքիան զգում էր իր վարած քաղաքականության վտանգավորությունը և Խորհրդային Միության կողմից սպառնացող վտագի աստիճանական մեծացումը: Ա. Էսմերը գրում էր, որ Գերմանիայի կողմից Թուրքիային սպառնացող վտանգը Ստալինգրադից հետո վերանում է, «սակայն դրա փոխարեն սկսում է դանդաղորեն աճել ռուսական վտանգը»⁴: Վտանգը կանխելու մտադրությամբ թուրքական կողմը Անկարայում ԽՍՀՄ դեսպանին հայտնում է Խորհրդային Միության հետ բանակցություններ սկսելու ցանկության մասին: Բանակցությունները կայանում են 1943 թ. փետրվար ամսին, ապա 1944 թ. հունիսին⁵, որոնց ընթացքում կողմերը հանդես են գալիս իրարամերժ դիրքերից և չեն կարողանում հասնել դրական արդյունքի: ԽՍՀՄ-ին սիրաշահելու մտադրություն ուներ 1943 թ. փետրվարի 10-ին Անկարայի ռադիոյի տարածած հայտարարությունը այն մասին, որ «Ֆելդմարշալ Պաուլուսը և մյուս գերմանական զենեակները պետք է ենթարկվեն պատասխանատվության Ուկրաինայում իրենց գործած վայրագությունների համար և հանձնվեն ռազմական դատարանին»⁶: Խորհրդային Միությունը իր հերթին 1943 թ. հուլիսի 29-ին հանձնարարում է իր դեսպաններին Թուրքիայի և Շվեդիայի կառավարություններին ներկայացնել նոտա այն մասին, որ եթե Առանցքի երկրների ներկայացուցիչները խնդրեն ապաստարան չեզոք տարածքներում, իրենք զերծ մնան նրանց ապաստարան տրամադրելուց⁷:

Հաջորդ տարիների ընթացքում ավելի են լարվում Թուրքիայի և Խորհրդային Միության հարաբերությունները՝ ռազմական առճակատումը դարձնելով առավել հավանական: Թուրքիան, ջանալով խուսափել Խորհրդային Միության հարձակումից, մի կողմից փորձում էր սիրաշահել դաշնակից երկրներին և, հատկապես, ԽՍՀՄ-ին, մյուս կողմից՝ մեծացնում սեփական պաշտպանական հզորությունը: ՀԽՍՀ ՆԳԺԿ հաղորդած տեղեկություններից պարզ է դառնում, որ 1944-1945 թթ. ընթացքում Թուրքիան թիկունքից սահմանային շրջաններ էր տեղափոխում մեծ քանակությամբ զորք ու զինամթերք և այդ շրջանները պատրաստում պատերազմական իրավիճակին: 1944 թ. մայիսին հեծելազորային զորամաս է կենտրոնացվում Կարսից 21 կմ հարավ-արևմուտք ընկած Բենլի-Աիմեդ շրջանում, հունիսի 15-ին Կարս է հասնում մի զունդ՝ առանց համարակալության ու ենթակայության,

¹ ДОТ-Долговременная огневая точка (երկարժամանակյա կրակային կետ), ДЗОТ-деревоземляная огневая точка (փայտա-հողային կրակային կետ):

² ՏԵՍ ԶԱԱ, ֆ. 688, ց. 32, գ. 32, թթ. 9-10:

³ ՏԵՍ Մելթոնյան Բ., նշվ. աշխ., էջ 39:

⁴ СССР и Турция 1917 – 1979, էջ 180:

⁵ ՏԵՍ նույն տեղում, էջ 178-179, 183:

⁶ Внешняя политика Советского Союза..., т. I, էջ 390:

⁷ ՏԵՍ նույն տեղում, էջ 348:

հունիս 16-ին Կարսից 36 կմ հարավ-արևելք ընկած Դիգոր (Տեկոր) գյուղ է հասնում հրետանային մի գունդ, իսկ հունիսի 20-ին Կաղզվանի կողմից Իգդիր և Տուլուջա գյուղ են հասնում երկու հետևակային գումարտակներ¹: 1944 թ. հունիսի 15-ի հրամանով թուրքական սահմանապահ կայազորները բերվում են ռազմական պատրաստվածության վիճակի: Թուրքական 242-րդ սահմանապահ գունդը համալրվում է Սարիղամիշից եկած զինվորներով, իսկ 246-րդ սահմանապահ գունդը ստանում է զգալի քանակությամբ գերմանական արտադրության ավտոմատներ²: Համաձայն հայկական հետախուզության տվյալների՝ թուրքական սահմանապահ զորքերը ռազմական նշանակության նվերներ են ստացել նաև ճապոնիայից³: Ականապատվում են Արաքս գետի վրա եղած կամուրջները՝ պատրաստելով պայթեցման: Մայիսին Թուրքիայի պաշտպանական պոստերը միմյանց և շտաբի հետ են կապվում հեռախոսային կապով, հունիսին 3-6 ամսով բանակ են կանչվում բոլոր տարիքի պահեստայինները: Թուրքական կառավարությունը ԽՍՀՄ-ին սահմանակից շրջաններից հեռացնում է իր համար անվտանգության բնակիչներին, ձերբակալություններ է իրականացնում նախորդ տարիներին ԽՍՀՄ-ից Թուրքիա տեղափոխված բնակիչների շրջանում⁴:

Թուրքիայում անհանգստությունը ավելի է մեծանում 1944 թ. երկրորդ կեսին, երբ ԽՍՀՄ զորքերը մտնում են Ռումինիա, ապա Բուլղարիա, իսկ 1944 թ. վերջին եռամսյակի ընթացքում վրացական սահմանային շրջանից քաղաքականապես անհուսալի տարրերը տեղափոխվում են: Հայկական 39-րդ և վրացական սահմանային ջոկատների հզորացումը Թուրքիայի կողմից մեկնաբանվում էին որպես «ԽՍՀՄ ռազմական նախապատրաստություններ ընդդեմ Թուրքիայի»⁵: Միաժամանակ լուրեր էին տարածում, որ Խորհրդային Միությունը պատրաստվում է նույն նպատակով մաքրել նաև հայկական սահմանային շրջանները ադրբեջանցիներից⁶:

Միևնույն ժամանակ Թուրքիան շարունակում էր իրականացնել ռազմական գործողություններին նախապատրաստվելու աշխատանքներ: Կարսի կայազորի դաշտային զորամասերի հրամանատարներն անցկացնում էին տակտիկական վարժություններ՝ ներգրավելով սահմանապահ զորքերին և իրականացնելով սահմանամերձ շրջանի առանձին բնակավայրերի բնակչության տարհանումներ: Կարսի հնացած հրետանին փոխարինվում է ավելի ժամանակակիցով: Կարս քաղաքի ամբողջ շրջակայքով կառուցվում են ԴՆՏ-եր և ԴՂՆՏ-եր, հակատանկային խրամատներ և այլն⁷:

Թուրքիան ավելի է ակտիվացնում հետախուզական աշխատանքները: Հատկապես ակտիվանում է Կարս և Իգդիր քաղաքներում գործող թուրքական հետախուզական մարմինների «Էմիհետ Նուֆետտիչ» մասնաճյուղի գործունեությունը: Հայկական հակահետախուզության մարմինները բացահայտել են հետախուզության և դիվերսիայի բազմաթիվ դեպքում: 1944 թ. սկզբին ձերբակալվում են թուրքական հետախուզության չորս լրտեսներ: Այնուհետև 40-րդ Երևանյան և 41-րդ Նախիջևանյան սահմանային ջոկատների թիկունքում հայտնաբերվում են ավազակային խմբեր, որոնք ղեկավարում էր Սադախ Մամեդովը, որը նախկինում գործել է Ադրբեջանական ԽՍՀ տարածքում⁸: 1944 թ. սեպտեմբերին սահմանային շրջանում հայտնաբերվում է երկու ավազակային խումբ: Ընդդեմ ԽՍՀՄ-ի Թուրքիան հետախուզական աշխատանքներ էր տանում նաև Իրանի տարածքում, որի համար Ն. Միյարինսկիի գլխավորությամբ ձևավորվում է առանձին հետախուզական կետ (տեղակայված էր Օրդուբադից 6 կմ հարավ): Այն պետք է բացահայտեր խորհրդային հետախուզության գործակալներին, մարդկանց, որոնք անօրինական կերպով պահում էին զենքեր,

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, գ. 6, գ. 17, թթ. 2-3:

² Տե՛ս նույն տեղում, թ. 3:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 8:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 4:

⁵ Նույն տեղում, գ. 19, թթ. 2-3:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 3:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 18, թ. 3:

⁸ Տե՛ս նույն տեղում:

ուսումնասիրեր տեղի բնակչության շրջանում հորհրդային Միության հանդեպ առկա տրամադրությունները¹: Թուրքական հետախուզության գործակալները կապ էին հաստատում հորհրդային Հայաստանի Թուրքիային սահմանակից շրջաններում բնակվող թուրքերի հետ և նրանց օգտագործում հակախորհրդային նպատակների համար: 1941-1944 թթ. ընթացքում սահմանային շրջաններում բնակվող մեծ թվաքանակով թուրքերը հորհրդային Հայաստանից բնակության էին տեղափոխվում Թուրքիա: Կային նաև մարդիկ, որոնք չէին ցանկանում իրենց զավակներին գորակոչել Կարմիր բանակ և խախտելով սահմանային ռեժիմը՝ տեղափոխվում էին Թուրքիա: Նման երևույթները թուլացնում էին հորհրդային Հայաստանի պաշտպանական հնարավորությունները: Մինչև հեռանալը թուրքերը երբեմն փորձում էին կազմակերպել ահաբեկչական ակտեր: Այսպես, օրինակ՝ 1944 թ. կեսերին Ամասիայի շրջանի Գյուլիբուլազ գյուղի չորս թուրք բնակիչներ որոշում են հեռանալ Թուրքիա, բայց մինչև հեռանալը որոշում սպանել գյուղխորհրդի և կուլտտետության նախագահներին: Նրանք գողանում են շրջանային տեսուչի ատրճանակը, սակայն չեն կարողանում իրենց նպատակն իրագործել և ձերբակալվում են²:

Պատերազմի ավարտվելուն համընթաց Թուրքիայի ղեկավարությունը փոխում է իր վերաբերմունքը և գործելաոճը: 1944 թ. նոյեմբերի 8-ին Թուրքիայի նախագահ Ի. Ինոնյուն, վարչապետ Սարաջողուն և արտաքին գործերի նախարար Հասան Սական Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի կապակցությամբ շնորհավորանք են հղում Մ. Կալինինին, Ի. Ստալինին, Վ. Մոլոտովին: Ջերմ մաղթանքների կողքին շեշտադրվում էր նաև երկու ազգերի բարեկամական հարաբերությունների մասին³: Մինչ այդ՝ 1944 թ. ապրիլի 21-ից Թուրքիան դադարեցրել է Գերմանիային ստրատեգիական հումքի մատակարարումը, իսկ օգոստոսի 2-ին՝ խզել դիվանագիտական հարաբերությունները: 1945 թ. ապրիլի 3-ին Թուրքիան դիվանագիտական հարաբերությունները խզել է նաև Ճապոնիայի հետ⁴: Հունվարի 12-ին Թուրքիան բացում է նեղուցները դաշնակիցների նավերի առաջ, իսկ փետրվարի 23-ին ձևականորեն պատերազմ հայտարարում Գերմանիային և Ճապոնիային⁵: Այս կերպ Թուրքիան ցանկանում էր մեղմացնել միջպետական լարվածությունը, սակայն ապարդյուն: Խորհրդա-թուրքական հարաբերություններում լարվածությունը ավելի է խորանում 1945 թ. սկզբին, երբ մարտի 19-ին ԽՍՀՄ արտգործնախարար Վ. Մոլոտովը Մոսկվայում Թուրքիայի դեսպանին հայտնում է 1925 թ. դեկտեմբերի 17-ի «եղբայրության և չեզոքության մասին» պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ: Հունիսի 7-ին Մոլոտովը Թուրքիայի դեսպանին հայտնում է նաև Սևծովյան նեղուցների վերահսկողության հարցի քննարկման և 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վերականգնման անհրաժեշտության մասին⁶: Սահմանի վերականգնման մասին լուրը նախկինում այդ տարածքներում բնակվող հայերի մոտ առաջ է բերում հայրենասիրական վերելք: Նրանք պատրաստակամություն են հայտնում վերաբնակվելու իրենց նախկին բնակության վայրերը⁷: Վտանգի գիտակցումով՝ Թուրքիան շարունակում է ռազմական ուժի կենտրոնացման և համալրման աշխատանքները: Անկարա-Սարիղամիշ երկաթուղու երկու կողմերում կենտրոնացվում է նշանակալի քանակությամբ զորք, որը զինված էր հնարավոր բոլոր տեսակի զինատեսակներով: Սահմանային բնակավայրերում տեղացի բնակիչներից ձևավորվում են զինված ջոկատներ, Թուրքիայի իշխանությունների համար անհուսալի համարվող տարերը տեղահանվում են ամբողջ Կարսի վիլայեթից⁸: 1945 թ. կեսերից սկսվում է ակտիվորեն պրոպագանդվել անգլո-թուրքական եղբայրության գաղափարը, քարոզվել, որ Անգլիան Թուրքիային կվերցնի իր

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 3:

² Տե՛ս նույն տեղում, գ. 17, թթ. 9-10:

³ Տե՛ս *Внешняя политика Советского Союза...*, т. II, М., 1946, с. 365, 368, 370.

⁴ Տե՛ս *Միմոնյան Հ.*, *նշվ. աշխ.*, էջ 528:

⁵ Տե՛ս *СССР и Турция 1917-1979*, էջ 184:

⁶ Տե՛ս *Մելքոնյան Ը.*, *նշվ. աշխ.*, էջ 53, 56:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 19, թ. 4:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 22, թթ. 2-3:

հովանավորության ներքո, եթե այն ենթարկվի ԽՍՀՄ-ի հարձակմանը: Համաձայն ՆԳԺԿ սահմանապահ զորքերի վարչության տվյալների՝ 1945 թ. հունիսին թուրքական բանակը անգլիացի հրահանգիչների ղեկավարությամբ ենթարկվում է վերակառուցման, մի շարք սահմանապահ պահակակետեր ստանում են գնդացիներ, ուժեղացվում է սահմանամերձ ճանապարհների վերահսկողությունը¹: Ուժեղացվում են հատկապես օպերացիոն երկու ուղղությունները՝ Էրզրում-Սարիղամիշ-Կարս և Էրզրում-Ալաշկերտ-Ղարաքյոսե-Բայազետ-Իգդիր²: Կառուցվում են պաշտպանական նոր ամրություններ Էրզրում քաղաքի և Կարսից 30 կմ հարավ-արևմուտք ընկած Սելիմ կայարանի շրջակայքում: 1945 թ. հոկտեմբերին Կարս են ժամանում անգլիացի սպա-մասնագետներ և գեներալ Ու. Շորթը, որոնք պետք է զբաղվեին ամրացման աշխատանքներով: Նրանց ուղեկցող թուրքական բանակի գլխավոր շտաբի ղեկավար գեներալ Կյազիմ Օրբայը Կարս քաղաքում տեղի ունեցած ցուցի ժամանակ հայտարարում է, որ «ռուսները մեզ ներկայացրել են մեծ տարածքային պահանջներ, սակայն մենք մեր տարածքները ոչ մեկին չենք տա և դրանում մեզ կօգնեն մեծ տերությունները՝ Անգլիան և Ամերիկան»³:

Ինչպես տեսնում ենք, թուրքիայի վրա Խորհրդային Միության հարձակման վտանգը շարունակվում էր Գերմանիայի կապիտուլյացիայից և անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Այն շարունակվել է նաև պատերազմին հաջորդած մի քանի տարիների ընթացքում և միայն միջազգային իրադրության ու այլ գերտերությունների ճնշման տակ ԽՍՀՄ-ն 1953 թ. հրաժարվում է Թուրքիային ներկայացրած իր պահանջերից:

Այսպիսով՝ Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում իրադրությունը Թուրքիա-Խորհրդային Հայաստան սահմանին մշտապես լարված վիճակ էր տիրում: Նախ, մինչև 1943 թ. անընդհատ աճում էր Թուրքիայի հարձակման հավանականությունը, որի շրջանակում Թուրքիան մեծ ուժեր էր կենտրոնացնում սահմանին՝ Ստալինգրադում Խորհրդային Միության պարտության դեպքում հարձակման անցնելու համար: Հայաստանում այդ ժամանակ հզորացվում էին պաշտպանական ուժերը: Հայրենական պատերազմի բեկման փուլից հետո աստիճանաբար մեծանում էր Թուրքիայի անհանգստությունը՝ սպասելով Խորհրդային Միության անխուսափելի հարձակմանը, որի հետևանքով Թուրքիան ավելի է մեծացնում սահմանին իր զորքերի թվաքանակը, կատարում պատերազմին նախապատրաստվելու աշխատանքներ: Սակայն ԽՍՀՄ-Թուրքիա ռազմական առճակատումն ի վերջո տեղի չունեցավ:

Геворг Кесоян, СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ. Великая Отечественная война своими результатами была решающей для будущего многих государств и наций, в том числе и для Советской Армении и армян. Хотя территория Советской Армении не стала полем битвы, однако угроза существовала, так как война возродила у политических и государственных кругов Турции пантюркистские идеи. Это означало войну против России и Армении с целью их уничтожения, что создало большую напряжённость на границе Турции и Советской Армении, максимально повысив вероятность конфликта. До 1943 г. Турция стягивала большие силы к границе, чтобы перейти в наступление в случае, если СССР потерпит поражение в Сталинграде. После перелома в Великой Отечественной войне постепенно росло беспокойство Турции в связи с неминуемым нападением СССР. Однако международные отношения не дали случиться конфликту СССР-Турция.

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 23, թթ. 3-4:

² Տե՛ս նույն տեղում, գ. 24, թ. 2:

³ Նույն տեղում, գ. 25, թ. 2:

Ключевые слова: напряжённость на границе, подготовка к войне, “активный нейтралитет”, концентрация войск, оборонные мероприятия, пантюркистские идеи, переговоры.

Gevorg Kesoyan, THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR. With its results the Great Patriotic War had decisive significance for many states and nations, including the population of Soviet Armenia. Notwithstanding the fact the territory of Soviet Armenia was not a battlefield, the risk was constant. The war paved a way for the revival of Pan-Turkist ideas among Turkish political and state circles. As far as it was targeted against Armenia and Russia, it entailed tensions across the Turkish-Soviet Armenian border with a great probability of conflict. Before 1943, Turkey concentrated large number of troops across the border, ready to go on offensive in case USSR lost the battle of Stalingrad. After the radical change in the Great Patriotic War, Turkish concerns rise regarding the imminent offensive of USSR. However, the international relations hindered the USSR-Turkish conflict.

Key words: border tensions, war preparations, “active neutrality”, concentration of troops, defense measures, Pan-Turkist ideas, negotiations.